ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberdhamaynq2017@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 24 » հունիսի 2025թ. № 122-Ա

ՀՐԱՏԱՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 23-ի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ մասի 1-ին կետի «դ» ենթակետով և 71-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետով սահմանված դրույթներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ հակակարկտային կայանների լիցքավորման համար շտապ անհրաժեշտ է հեղուկ գազ, որի ձեռքբերման համար գնանշման հարցման գնման ընթացակարգը երկու անգամ չկայացած է հայտարարվել՝

որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի կարիքների համար հեղուկ գազի գնումը իրականացնել հրատապության հիմքով մեկ անձից գնման ձևով: Գնման ընթացակարգի հրավերը տրամադրել միայն գնման հայտում նշված անձին (հնարավոր մասնակցին):
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ

2025թ. հունիսի 24
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի փող., 7

հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberdhamaynq2017@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հունիսի 2025թ. № 123-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՎԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 06-025-0112-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ, ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 05.06.2025Թ. № 108-Ա ԵՎ 18.06.2025Թ. № 121-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով և հաշվի առնելով «Թոմփսյանց» ՍՊԸ տնօրեն Համլետ Սահակյանի լիազոր անձ Սարգիս Մարիկյանի դիմումը, Լոռի Բերդ համայնքի ավագանու գոտիավորման նախագիծը հաստատելու մասին 10.05.2024թ. թիվ 32-Ա որոշումը, ՀՀ Լոռու մարզպետի 16.05.2024թ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ-8 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾՄԱՆ ՄԱՍՈՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 259-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. «Թոմփսյանց» ՍՊԸ սեփականություն հանդիսացող Բովաձոր բնակավայրում գտնվող 06-025-0112-0003 կադաստրային ծածկագրով 1.19755 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի:
2. Ուժը կորցրած ճանաչել Լոռի Բերդ համայնքի ղեկավարի 05.06.2025թ. «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՎԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 06-025-0112-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» №108-Ա և 18.06.2025թ. «ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 05.06.2025Թ. ԹԻՎ 108-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» № 121-Ա որոշումները
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ.

Կատ. Ս. Մամասեանի
հեռ. 098269792

2025թ. հունիսի 30
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
Գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7

Հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» հունիսի 2025թ., № 124-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Կողես բնակավայրի 06-056-0020-0004 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Կողես, 6-րդ փողոց, թիվ 1 բնակելի տուն փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

Կատ.՝ Լ. Մամաջանյան
Հեռ.՝ 098289292

2025թ. հունիսի 30
գ. Լոռի Բերդ